



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3928

281.6

3-92

1000 B

2010

ՀՌՌԳՄԸՅԻ ՊԸՊԸ


ՀԸՅՈՑ ԸՉԳԻՆ ՀԵՏ

ԻՆՉ ԻԸՆ ՈՒՆԻ

ՊՈՍՏԱԿԻՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա՝ Գ՝ ՉԸՐՁԻԿԻ

1853



23173



"De Petri primatu nihil apud Justinum, Irenaeum, Clementem Alexandrinum et alios antiquissimos". (Du Pin Dissert. p. 313.)

Պետրոս Առաքելաբն գլխաւորութեամբ լայն
գրութեան իւր շնորհաբան Յոսիպոսին, Արամոսին,
Աղէմէս Աղէսաանդրայեան, իսկ որքէն անոնք չարե-
րոն գրութեան իւր:

(Տիպեն Պապական պատմիչ ՅԱՅԻՔԵԱ .)



564
39

281.6
2-92

uy

Հ Ռ Ո Վ Մ Ա Յ Ի Պ Ա Պ Ը Հ Ա Յ Ո Ց

Ա Զ Գ Ի Ե Ն Հ Ե Տ Ի Ն Չ Բ Ա Ն

Ո Ի Ն Ի :

1838

Հայոց աղօթի մէկ պզտիկ մասը՝ իրենց հոգևոր գլուխ կը ճանչնան Հռովմայի եպիսկոպոսը . անոր ընդունածը իրենք ալ կ'ընդունին և բանադրածը կը բանադրեն . ու երբոր զինքը չընդունող Հայոց աղօթի բոլորին համար մէկէն կ'ըսէ թէ՛ Հերետիկոս և յաւիտենական դատապարտութեան տակ են , աս վճիռին Մժէն կ'աղաղակեն անոնք . Մռանց անոր հրամանին եկեղեցի չեն կրնար կազմուիլ , դպրատուն չեն կրնար բանալ և ոչ գիւղ տպել . և անոր կը նային գիտնալու թէ՛ երբ միս և երբ կանանչեղէն ուտելու են . երբ ամուսնանալու են ու երբ ամուրի մնալու են : Բոլոր ըսածնին անոր հզօր ձայնին արձագանքներն են : Երբոր Պապը եօթը լեռներու վրայ եղած քաղաքէն՝ իր հեռաւոր աթոռէն , Մ.Յո՛ կ'ըսէ՛ անոնք զարմանալի համաձայնութեամբ Մ.Յո՛ արձագանք կուտան անոր խօսքին . և երբ Ոչ կը գողայ՝ ահա՛ հաւատարիմ արձագանքը ան նոյն արգելիչ ձայնը կուտայ :

Բայց բուն ասոնցմէ մէկը՝ ան հեռաւոր եպիսկոպոսին ուրիշներէն աւելի նախանձաւոր ախոյեան մը եղածի պէս , անցեալ տարի այլ և այլ ծանր ամբաստանութիւններ կը հրատարակէ իր եղբայրներուն մէկ մասին , մասնաւորապէս Վննետիկի

Սուրբ Ղազարու Միաբանութենէն եղողներուն դէմ:

Վ'ամբաստանէ զանոնք թէ Հատ բարեկամութիւն կը պահեն իրենց ազգակիցներնուն հետ, որոնք Հռովմայի Պապը՝ իբրև իրենց գլուխ չնդունելու քրէական յանցանքին տէրն են. իրենց հայրենի երկիրը կը սիրեն, նոյնպէս ալ ազգերնին. միաբանութեան հոգի մը կը կրեն իրենց մէջ անոնց հետ՝ որոնք ոսկր յոսկերէ և մարմին՝ ի մարմնոյ են. և ասոր համար Հռովմայի ատեսանը զանոնք հերետիկոսներուն կարգը կը դասէ և կորստեան կը մատնէ: Այլ միայն բարեկամութիւն ունենալու չէին հերետիկոսներուն հետ՝ թէ և իրենց հայրենիքը անգամ ըլլան, այլ նաև անիծելու են բուն իրենց հայրերնին՝ մայրերնին՝ քոյրերնին՝ եղբայրներնին՝ էրիկնին կամ կնիկնին՝ զակրներնին, և զանոնք դժոխքին բոցերուն մատնելու են. որովհետև Պապը սյնպէս կ'ընէ: Եւ սյս սյսպէս չընելուն համար, վերոյիշեալ հրատարակութեան Անանուն շեղինակը զանոնք ամենը մէկ դատապարտութեան վճիռի տակ կ'ամիսօփէ: Անոր նայելով ամենևին Պապական չեն անոնք. այլ իրենց ազգակիցներնուն պէս զուտ հերետիկոս և անոնց հետ դժոխքին մէջ իրենց յախտնական բաժինը՝ պիտի ընդունին: Իրան որ ծանր է սյս վճիռը. վասն որոյ զարմանք չէ որ Հայաստանեայց եկեղեցիէն եղող միւս Հայերը՝ սաստիկ կարեկցութիւն ցուցուցին խեղճ ու դատապարտեալ Աբրաքուոյ վրայ, այս

Մանուն շեղինակին Պարսաւագիրք կոչուած գործքը՝ նոր երեցած տտենը: Ա՛րսեն թէ՛ մինչև անգամ սկսեցին համրել նոյն՝ բանագրեալներուն միաբանութենէն կամ անոնց համակամներէն եղող նոյն Պապական եկեղեցականներն ու աշխարհականները՝ որոնք որ հաւանական կը կարծէին թէ շատ չանցած պիտի դառնան իրենց եկեղեցւոյ ծոցը. և կէս Պապական եղած ըլլալովսին՝ դարձեալ բարի և հաստատուն շայեր պիտի ըլլան: Վաղաքիս և թէ Օմիւռնիայի հայերէն Վրագիրներուն մէջ՝ քանի քանի յօդուածներ գրուեցան՝ հայրենասիրութեան համար գրեթէ մարտիրոսացեալ խեղճ Մ.բբացւոց սիրտը մխիթարելու և իրենց առջին դիւրին ճամբայ բանալու՝ որ իրենց հօրերնուն եկեղեցին դառնան:

Իսկ Աբբացիք ի՞նչպէս ընդունեցին իրենց շայ եղբարցը առ բարեկամական կարեկցութիւնները: Սարդիկ երբոր նեղութեան մէջ ըլլան՝ բնական է որ կարեկցութիւն ընդունիլ սիրեն. և մասնաւորապէս երբոր անիրաւ յարձակմունք և զուրճախատիւնք է կրածներնին՝ սովորաբար մեծ ուրախութեամբ և շնորհակալութեամբ կ'ընդունին ան ձեռքը՝ որ երկնցած է իրենց՝ ինչան բարեկամութեան և սիրոյ: Իսկ Աբբացիք այսպէս չըրին: Մնոնք կը լսեն շատ կողմերէն իրենց շայ եղբարցը կարեկցութեան ձայնը, և իրենց բարերար ըլլալ ուղողներուն՝ միայն նախատիւնք կը փոխարինեն: Սե՛ծ տեսրակ մը կը հրատարակեն, որուն մէջ

դարձեալ կը հաստատեն բազմօրինակ սաստիկ ա-
ծականներով՝ նոյն յաճախ յիշեալ վճիռը, թէ
Հայերը ուրիշ բան մը չեն, եթէ ոչ հերձուա-
ծող և հերետիկոս, անդարձ կորստեան մատ-
նուած, թէ որ չդառնան և Հռովմայի Պապը իրենց
հոգևոր գլուխ չընդունին: Սակ կը հաստատեն
թէ՛ Մենք միշտ նոյն համարումը ունէինք մեր ազ-
գակիցներնուս վրայ, և կը ճանչնայինք ու կը դա-
ւանէինք՝ որ Մենք Պապը չընդունելուն համար
ամենը դէպ՛ի կործանում կը դիմեն: Մհա՛ ասոնք
այսպէս կ'ըգային ու կը հաւատային բոլոր ան
միջոցին՝ որ ատեն որ իրենց շատ բարեկամութիւն
և սէր կը ցուցընէին:

Տայց ի՞նչ յուզմունքներ չյարուցաներ Աբ-
բացուոց այս տեսրակը Հայկական սրտերուն
մէջ: Արդ՝ կը տեսնուի որ Պապականները իրենց
կրօնական դադարաւորներնուն կողմանէ նոյն են
ամեն տեղ և ամեն ատեն: Իրենց սկզբունքը
միշտ աս է. Հերետիկոսներու հետ բնա- թափա-
նու-թի-ն չընել. և իրենց նայելով հերետիկոսը
այսպէս կը սահմանուի. Մն որ հոգին ու մարմինը
կապարեալ հնազանդութեամբ Հռովմայի Պապին
չանջնէր հերետիկոս է: Թէ որ անարատ բարոյա-
կանութիւն ունեցող մարդ մըն ալ ըլլայ, Յիսուսի
անկեղծ հաւատացող մը. և ըլլայ որ Մատուծոյ հետ
հանապազորդեայ հաղորդակցութեամբ ապրի, ա-
նոր Արքազան Խօսքին և Արքոյ Հոգւոյն միջոցովը.
և ըլլայ ալ որ իր մեղացը վրայ ճշմարիտ և խորին

զղջում և կենդանի ու զօրաւոր հաւատք ունեցած ըլլայ Յիսուս Քրիստոսի վրայ՝ իբրև իր Փրկիչը . և բոլորովին խելքը գլուխը եղած ըլլալով՝ ուրախ և խաղաղ հոգիով աշխարհէս ալ փոխուի, մահը՝ զինքը երկնից՝ յաւիտենական սրբութեանը և երջանկութեանը հրաւիրելու համար խրկուած՝ Աստուծոյ պատգամաւորի պէս ընդունելով . բայց այսու ամենայնիւ եթէ Հաովմայի եպիսկոպոսը երկրի վրայ Քրիստոսի փոխանորդ չընդունի և կատարեալ հնազանդութեամբ չհրապատակի անոր, հերետիկոս է ու փրկութիւն չկայ անոր: Աւստի աս տեսրակին ազդեցութեամբը Ա եւնետիկի Սիսիթարեան Միաբաններուն վրայով բոլորովին փոխուեցաւ Հայոց բերանը: Յօդուած յօդուածի ետեւէ երեցան իրենց օրագիրներուն մէջ և տեսրակ տեսրակի ետեւէ կը յանդիմանէին կը դատապարտէին (կարելի է երբեմն ալ չափէն աւելի խիստ ոճով) զանոնք, որոնց բարեկամութեանը քիչ մը առաջ կը փափագէին:

Մինչև ցարդ՝ մենք Աւետարանականքս լուծութեամբ կը դիտէինք եղածները . բայց ճշմարիտ է որ՝ ոչ անզգայ էինք եղած բաներուն ու ոչ ալ անտարբեր էինք ինչ հետեւելիքին: Մեր սկըզբունքները մեզ կը պարտաւորեն աւելի Հայերուն քան թէ Պապականներուն վրայ համակրութիւն ունենալ, վասն զի մենք ալ Հայերուն պէս կը հաւատամք որ՝ Պապին պահանջած եպիսկոպոսութեան թէմը՝ որ է բոլոր այս աշխարհս, քիչ

մը չափազանց է և դիւրին բան չէ այս պահանջ-
մունքը ապացուցանել անոնց՝ որոնք կը համար-
ձակին ինքիրեննին բանը խորհիլ և դատել :

Թէպէտ մենք անոր համար լուռ կեցանք որ՝ մենք
մեզի ըսինք թէ ասիկայ մէկ ընտանիքէ եղող եղ-
բարց մէջ եղած վէճի պէս բան մըն է . և անվա-
յել պիտի երևնայ մէջ մտնել , և ամենեին ապա-
հով բան չէ ընտանեկան կռիւներու խառնուիլը :

Իսկ այն պնդան լուռեցաւ և կ'երևի ալ թէ կը
հաւատացուի որ՝ մտերս Հայոցմէ ելած տեսրակ-
ներուն մէկ քանին՝ իրօք Մետաբանականներէ
գրուած ըլլայ , որուն համար խօսելու պարտաւորե-
ցանք . թէպէտև մինչև հիմա ան նիւթին վրայ
տող մը բան անգամ գրած կամ հրատարակած
չունիմք երբէք :

Երբոր կը մտածեմք Հայոց ազգին ան մասին
վրայ՝ որոնք կամաւ ինքզինքնին Հոովմայ Պապին
երկաթէ իշխանութեանը տակը դրած են , զար-
մանքով կը լեցուիմք և միանգամայն կը խղճամք :
Ընոնք՝ որ բուն իր հպատակներն են և ամենէն
աղէկ անոնք ճանչցած պիտի ըլլան զինքը , կը հը-
նազանդին իրեն միայն անոր համար որ՝ հնազան-
դելու բռնի պարտաւորած են : Ընցեալ քանի մը
տարիներուն դիպուածները պայծառ ցուցուցին որ
Պապին իշխանութիւնը իր սահմանին մէջ բնա-
կող բուն Հոովմայեցւոց մեծ մասը ուրախու-
թեամբ վրանուն պիտի թօթվէին եթէ կարենա-
յին . բայց թնթանօթները , հրացանները և թու-

րերը, զանոնք երկիւղի և հպատակութեան մէջ կը բռնեն : Ուրեմն որչափ արգարե զարմանալի է, որ ան մարդիկը՝ որ Եսիա կը բնակին, Պապէն այնքան հեռու, ուր չեն կրնար հասնիլ անոր ուռմբերը՝ թնթանօթի գունտերը, և անոր ստորերկրեայ բանտերէն և շղթայներէն վախ չունին,* գան իրենք իրենց ազատ կամօքը և հաճութեամբը փափաղին անոր բռնաւորութեանը, և յօժարութեամբ ճիտերնին անոր ծանր լուծին տակը դրնեն :

Կը խղճամք զանոնք, ինչու որ գիտեմք որ զարմանալի կերպով խարուած են : Ո՛վ կրնայ ըսել թէ մարմնաւոր տանջանքի ու պատիժի վախը չէ որ Պապական կ'ընէ զանոնք, այլ բանականութեան և ճշմարտութեան համողիչ զօրութիւնը

* Ընթացողացա կամ շատ խեղճ աստի շայեր Խոնջե ասեգամ Պապականեաներու աստիկներէն ալ, որ չեն գիտեր թէ՛ Քրիստոսի փրկանարդ կոչուող շարժանցի եղիակուողսը աստեղ արտաբաններ անի իր յետքը. աստի պէտք է որ ասէնը գիտնան թէ՛ Պապը անշարհային լազուար ինն ալ է. Խ աստիդը թէ ի՞նչը աս արտաբանները քաղաքական իշխանութեան օրէնքով գործածելու Գէմ չէ, թէ որ իրօք ինչը օրինուող լազուար ինն եղած ըլլալ. այլ աս ալ պէտք է որ ասէնը գիտնան թէ՛ Պապը աստեղ իշխանութեան ինն ասէնեան Քրիստոսէն աստեղ չէ :

և ոչ թէ նիւթական՝ այլ բարոյական ապացոյցներով համոզուած են :

Եթէ աս բարոյական ապացոյցները այնքան զօրաւոր և համոզիչ են, կը խնդրեմք թող ըսեն թէ ինչո՞ւ համար Պապը և աշխարհիս ամէն կողմը եղող իր սպասաւորները՝ աւելի զանոնք չեն գործածեր և անոնց չեն ապաւինիր :

Չկայ Պապական կառավարութիւն մը Եւրոպայի մէջ՝ որ համարձակի ազատութիւն տալ իր ժողովրդեանը, որ իրենք իրենց դատողութիւն ընեն Պապականութեան աս վերի ըսուած ապացոյցներուն զօրութեանը վրայով : Ուր որ կառավարութեան մէջ Պապը մաս ունի, խօսքի՝ տրպագրութեան և խղճի ազատութիւն չկայ : Իր ժողովուրդները հպատակութեան մէջ պահելու ամենէն գլխաւոր ապացոյցն է՝ Բար :

Արկին կ'ըսեմք թէ՛ արդարև կը մեղքընամք ան Հայերը, որ իրենց կամօքը և ունայն տեղը դրեր են ինքզինքնին լուծի մը տակ, որմէն ազատ ըլլալու Եւրոպայի մէջ միլիոնաւոր մարդիկ հառաչանօք կը ցանկան՝ բայց չեն կրնար, ամեն կողմանէ դէպ 'ի իրենց շտկուած հրացաններուն պատճառովը :

Մնչուչտ խաբուած են անանկները : Ի՞նչ իրաւունքով Հռովմայի եպիսկոպոսը իշխանութիւն կրնայ պահանջել Մսիայի եկեղեցիներուն վրայ : Երբոր Հայոց ազգը նոր քրիստոնէութեան դարձաւ, հոն Պապ կար, կամ թէ իր եպիսկոպոսներուն կամ քարոզիչներուն մէկուն ձեռօքը անոնք քրիստոնեայ եղան :

Եթէ Աբգար թագաւորին և անոր ժողովորդեանը դարձի գալուն պատմութիւնը ճշմարիտ է, ինչպէս որ Հայոց և Եւսեբիոսի պատմութեանց մէջ կայ, (և Պապականք իրենք ալ անիկայ կ'ընդունին,) Հռովմայ մէջ ան ատենը Պապ չկար. և ոչ քրիստոնէական եկեղեցի մը անգամ: Եւ Աբգարու իշխանութեան ժամանակի եկեղեցին որքան ալ ուշ հաստատուած ըլլայ, Հռովմայի առաջին եկեղեցիէն ետքը հաստատուած ըլլալու չէ. այլ անկէ առաջ կամ գոնէ անոր ժամանակակից է: Եթէ Վրիստոս իր խոստմունքը կատարեց և համբաւնալէն անմիջապէս վերջը Թագաւորը առաքեալը խրկեց՝ որ Թագաւորը բժշկէ, և Եւետարանը քարոզէ Հայոց, աս պատմութեանը նայելով հարկաւ անկէ առաջ Հռովմ եկեղեցի հաստատուած չէր կրնար ըլլալ:

Իայց կ'ըսուի թէ՛ թէպէտև Հռովմայի եկեղեցին յայտնապէս Միայի քանի մը եկեղեցիներէն ետքը հաստատուեցաւ, բայց և այնպէս ան եղաւ հոյր եկեղեցի, վասն զի Պետրոս առաքեալէն հիմնադրուեցաւ, և առաքելոց գլուխէն կառավարուեցաւ:

Իայց քանի մը բաներ կան՝ հոս հաստատապաշտոյցներով ստուգուածի պէս առնուած՝ որոնք դեռ ապացուցուելու կարօտ են, որոնցմէ ոմանք ալ բնաւ չեն կրնար ապացուցուիլ:

Նախ՝ բնաւ չկրնար ցուցուիլ ոչ Սուրբ Վրոց մէկ վկայութեամբը, և ոչ ալ աշխարհիս մինչև հի-

մա ծանօթ եղած որ և իցէ վաւերական պատմութեամբը, թէ առաջ Պետրոս առաքեալ քարոզեց Մեծտարանը Հռովմ և հոն եկեղեցին հաստատեց :

Երկրորդ՝ Ոչ ալ բնաւ կրնայ ապացուցուիլ թէ Պետրոս առաքեալ զլուխ դրուած էր առաքելոց . իսկ ասոր բացասականը կրնայ ցուցուիլ որ հիմա վարը պիտի տեսնուի :

Նւ երրորդ՝ բնաւ չկրնար ապացուցուիլ թէ երկրի վրայ որ և իցէ եկեղեցի մը մինչև անգամ մեր Տէրոջը խաչուած քաղաքին՝ Արուսաղեմի առաջին եկեղեցին Վրիստոսի կամքովը հայր եկեղեցի որոշուեցաւ, որ անոր ամեն եկեղեցիները խոնարհութիւն ընեն :

Մս չապացուցուած խնդիրներուն առաջինը՝ այսինքն Հռովմ Մեծտարանը առաջ ո՞վ քարոզելը այնքան փոքրիկ բան մըն է որ՝ ատ նիւթին վրայ Մտուածաշունչ պատգամը բառ մըն ալ չըսեր . վասն որոյ մենք ալ գոհ ըլլալու և բանը թողելու եմք :

Գլխաւոր խնդիրները երկրորդն ու երրորդն է . և ասոնց վրայ սա կ'ըսեմք, որ ան մէկ հատիկ ճամբան՝ որով ասոնք ճշմարտասէր քրիստոնէից բանականութիւնը յազեցընելու չափ ան ատերնը միայն կրնան հաստատուիլ, որ ատեն որ մէկ "Մյոպէ" աւէ Տէր", մը ցուցընեն Սուրբ Գրոց մէջէն :

Հին Ատակարանի տնտեսութեան ներքեւը՝ Եր-

բոր այսինչ ընտանիքէն մէկը՝ քահանայապետ և
 հոգևոր գլուխ ըլլալ կը պահանջուէր բոլոր Աս-
 տուծոյ ժողովրդեանը վրայ, աս պահանջմունքը
 մէկ պարզ «Այսպէս ասէ Տէր» ըսելով մը կը հաս-
 տատուէր. բայց ո՞ր և եղ կայ «Այսպէս ասէ Տէր»
 մը բոլոր Աոր կտակարանին մէջ, որ քահանայա-
 պետ մը հաստատէ երկրի վրայ Քրիստոսի եկե-
 ղեցւոյն հոգևոր գլուխ ըլլալու. բնաւ մէկ տեղ
 մը. և եթէ Քրիստոս չհաստատեց ասանկ մէկը,
 ո՞վ հաստատեց ուրեմն:

Չեմք ուզեր որ Պապական մը Աւետարանա-
 կաններուն Աստուածաշունչին մէջ ասանկ վկայու-
 թիւն մը փնտռէ, այլ թող իր Աստուածաշունչը
 առնէ՝ եթէ կը կարծէ որ մէջերնին տարբերու-
 թիւն կայ. և թէ որ կ'ուզէ՝ թող առնէ Աւրո-
 պայի ամեն Պապական և կեղեցիներուն մէջ կոր-
 ծածուած Ատփներէն Աստուածաշունչը կամ թէ
 Հայերէն գրաբառը, և թէ որ կրնայ թող ցուցնէ
 Քրիստոսի մէկ հրամանը թէ երկրի վրայ իր
 եկեղեցւոյն տեսանելի քահանայապետ մը պիտի
 ըլլայ: Բայց առաջուց կրնամք իմացընել իրեն
 թէ պարապ տեղը պիտի փնտռելու աշխատի:

Ալ երկրի վրայ Քրիստոսի տեղը եկեղեցւոյ
 տեսանելի գլուխ մը ըլլալու հարկաւորութեանը
 վրայ եղած բոլոր խօսքերը, մարդկային փառասի-
 րութեան պտուղ և մարդկային հնարք է: Այնտեղ
 այսպիսի հարկաւորութիւն մը ըլլար, Քրիստոս
 եկեղեցւոյ մեծ գլուխը՝ իր բերնովը կամ առա-
 քելոյ ձեռքը իմացընել պիտի մեզի:

Իսայց Վրիստոս բանալիները Պետրոսին շտու-
 ան և շրտան թէ “ Ինչ բան որ երկրի վրայ կա-
 պես, երկինքին մէջ կապուած ըլլայ” Թ : Լ.Յ՛՛ ը-
 սաւ . և գրուած է Սատթէոսի Մետարանին ժող-
 գլխուն 19 երորդ տունը . և եթէ նոյն գրքին
 քանի մը թուղթը դարձնես մինչև հասնիս ժող-
 գլխուն 18 երորդ տունը՝ հոն պիտի տեսնես որ
 Վրիստոս ճիշտ նոյն խօսքերը բոլոր իր աշակեր-
 տացը ըսաւ . և դարձեալ Յովհաննու Մետա-
 րանին ի գլխուն 22 երորդ և 23 երորդ տուները,
 բոլոր առաքելոց՝ իսկապէս նոյն բանը ըսաւ :
 Ասանորոյ ինչ իշխանութիւն որ Պետրոս
 առաքեալին տուաւ, հաւասարապէս ամենուն ալ
 տուաւ . անանկ որ եթէ ան խօսքերովը Պետրոս
 առաքեալ քահանայապետ եղած կ'ըլլար, միւս
 առաքելոց ամեն մէկն ալ քահանայապետ եղած
 կ'ըլլան : Եւ այսպէս եթէ ան խօսքէն քահա-
 նայապետութիւն կ'ելլէ, ամեն առաքեալի յաջորդը՝
 մէկ մէկ քահանայապետ եղած պիտի ըլլայ Վրիս-
 տոսի եկեղեցւոյն վրայ, որոնք ամենը մի և նոյն
 ժամանակ պիտի կենան, և հաւասար իշխանու-
 թեամբ պիտի իշխեն :

Իսայց Պետրոս և կամ ուրիշ առաքեալ մը՝
 միւսներուն վրայ Վրիստոս գլուխ չկարգելը, ինք
 իր բերնովը վճռեց : Վրուած է թէ անգամ մը
 և կըթուի թէ քանի մը անգամ, առաքեալները
 աս խնդիրը հանեցին մէջերնին թէ իրենցմէ ո՞րը
 յէջ պիտի ըլլայ, աս պատմութիւնը կը գտնուի,

Մատ . Ի . 25 , 26 , 27 : Մարկ . Ժ . 42 , 43 , 44 : և
 Ղուկ . Էթ . 24 , 25 , 26 : Այլ գրուած է որ մեր
 Փրկիչը բոլոր տասներկուքը իրեն կանչեց և ըսաւ .
 “Վիտեք որ ազգերուն իշխանները կը տիրեն ա-
 նոնց , և մեծամեծները կ'իշխենն աւոնց . Տայց ա-
 սանկ պիտի չըլայ ձեր մէջը , հապա ձեզմէ ո՛վ
 որ մեծ ըլլալ կ'ուզէ՝ ձեր սպասաւորը թող ըլլայ՝
 Ու ձեզմէ ո՛վ որ կ'ուզէ առաջին ըլլալ՝ ձեր ծա-
 ոան թող ըլլայ” :

Ահա հոս՝ մէկ պարզ “Այսպէս առ Տէր” մը
 ունիմք աս նիւթին վրայ , որ յաւիտեան կը վճռէ
 խնդիրը : Առաքելոց մէջ՝ մէկը միւսներուն վրայ
 տէրութիւն կամ իշխանութիւն ունենալու չէ ե-
 ղեր , և ոչ մէկը միւսներուն գլուխը , այլ ամենը
 կատարեալ հաւասարութիւն պիտի ունենան ե-
 ղեր իրարու հետ : Աս պատուէրը եկեղեցւոյ ամե-
 նէն բարձր իշխանութենէն տրուած է , և 'ի հար-
 կէ ասկէ ստորին իշխանութիւն մը հնար չէ որ
 ասիկայ ոչնչացընէ : Ասիկայ բուն Վրիստոսի
 հաստատած օրէնքն է , և ոչ մէկ մասնաւոր կամ
 ընդհանուր ժողովքի մը վճիռը . ոչ ալ ո՛ր և իցէ
 հայրապետի մը և կամ հայրապետներուն կարծի-
 քը . և ոչ Պապին կոնդակները կրնան փոխել
 զանիկայ :

Ասիկայ բնաւ չկրնար փոխուիլ , եթէ ոչ նոյն
 Աստուածային իշխանութեամբը՝ որ նախ հաստա-
 տեց անիկայ՝ իբրև կանոն իր եկեղեցւոյն : Այլ
 ուստի կ'սպասեմք որ ասանկ հրաման մը յառաջ

բերեն : Պետրոս առաքելոց գլուխ էր ըսողներուն կ'իյնայ ցուցընել թէ ե՞րբ և ո՞ւր տեղ Քրիստոս արեց աս օրէնքը թէ՛ իր աշակերտներուն մէջ մէկմէկու վրայ տէրութիւն կամ իշխանութիւն պիտի չըլլայ , և ոչ մէկը գլուխ միւսներուն վրայ . և ցուցընեն թէ Պետրոսին իշխանութիւն մը տուաւ՝ որ միւս առաքելոց տուած չէ և չտուաւ : Հոս կ'ուզեմք աս ալ ծանուցանել թէպէտ աս նիւթին վրայ հիմայ ընդարձակ չեմք կրնար խօսիլ , որ մինչև անգամ եթէ ապացուցուէր թէ՛ Պետրոս Պապականաց ըսած կերպովը բարձր իշխանութեան մը հասած էր , տակաւին ասկէ ամենեին չէր ելլէր որ Հռովմայի եպիսկոպոսը եկեղեցւոյ գլուխ է :

Ըսոր համար ալ երկրորդ "Եյսուէս ասէ Տէր" մը ցուցընելու են , որ ապացուցուի թէ այս անձինքը Պետրոս առաքելոյն մշտնջենաւոր յաջորդներն են նոյն բարձր պաշտօնին մէջ : *

Երկ արդ՝ դառնամք Հայոց եկեղեցւոյն : Երբոր ազգը երկրորդ անգամ քրիստոնէութեան դարձաւ , Հռովմայի Պապը թէ անձամբ կամ թէ իրեն քարոզչացը մէկուն ձեռօքը հո՞ն էր : Քաջածանօթ բան մըն է որ աս երկրորդ դարձին հա-

* Ըս նիւթին վրայ ընդարձակի կերպով պիտի գրուած գրքերն ուղարկուէրը , անշտաբարձրապէս՝ ԳԼՈՒԽ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՏՈՒՄ՝ ՓՍՓՍՆԸՆ ԻՏՏԻԱԿԵՐԻ անունն Օրիւնիւնոց արարած Գրքարանգիւստի մէջ :

մար Լստուծոյ գործածած միջոցը Վրիգոր Լուսաւորիչն էր: Մէկը կրնայ կեղծել թէ Վրիգոր Լուսաւորիչ Պապական էր, կամ Հռովմայի եպիսկոպոսէն խրկուած, և կամ յանոր հրամանովը Լեւտարանը Հայոց քարոզած, և Տրդատ թագաւորն ու անոր ժողովուրդը մկրտած էր:

Վրիգոր Լուսաւորիչ մեծ Հայաստանու Լըտաղ գաւառը ծնած՝ և Յոյն քրիստոնեաներէն Աեսարիայ կրթուած էր, որոնք և մկրտեցին զինքը իրենց հաւատքին համեմատ և հոնկէ իր երկիրը դառնալով, իր հաւատքին համար տարիներով նեղութիւն քաշելէն վերջը քարոզեց Լեւտարանը թագաւորին, ազնուականներուն և ժողովուրդներուն, որոնք բարեբաղդաբար դարձի եկան: Յետոյ դարձեալ Աեսարիայ գնաց Վրիգոր Լուսաւորիչ՝ և հոն ձեռնադրուեցաւ և Հայաստան երկրին եպիսկոպոս կարգեցաւ Ղևոզիոս Յոյն առքեպիսկոպոսին ձեռօքը, ու ան ատենը ևս դարձաւ և մկրտեց բոլոր Հայոց ազգը: Ըրդի՛նչ բան ունէր Հռովմայի եպիսկոպոսը աս ամեն անցքերուն մէջ: Ըյն հին ժամանակները՝ աշխարհիս վրայ գտնուած բոլոր քրիստոնեական եկեղեցիներուն գլուխ ըլլալու կեղծեալ պահանջմունքները տակաւին չէր ըներ անգամ: Ըս խիստ տարօրինակ և անհիմն պահանջմունքը քաղաքական զօրութեամբ նախ և առաջ հաստատուիլը, Վրիգոր Լուսաւորիչի ժամանակէն չորս հարիւր տարի վերջը եղաւ:

Եթէ արգէն դուրս մէկը կրնայ իշխանութիւն մը պահանջել Հայոց վրայ, անշուշտ Յոյնները ըլլալու են. վասն զի Յունաց ձեռքը Գրիգոր Լուսաւորիչ կրթուեցաւ, մկրտուեցաւ, ամուսնացաւ և յուսկ յետոյ եպիսկոպոս կարգեցաւ Հայաստանու: Եւ Հռովմ ամենեկին մասն չունեիր աս բաներուն մէջ, և մինչև անգամ իրմէն խորհուրդ ալ չէին հարցուցած աս բանին վրայօք:

Ճշմարիտ է որ անանկ կ'ուզեն ցուցնել թէ՛ Գրիգոր Լուսաւորիչ քանի մը տարիէն վերջը Հռովմ դնաց և հոն դարձեալ եպիսկոպոս կամ Պատրիարք կարգեցաւ բոլոր Հայոց: Ետոր վրայ կ'ըսեմք. —

Նախ թէ որ աս ըսածնին ճշմարիտ է, ան հազարաւոր անգամէն ատ միայն մէկ անգամն է, որ Պապը խառնուած է սյրոց գործին և ան իշխանութիւնը ունենալ ցուցուցած է՝ որուն իրաւացի պահանջում չունի: Միշտ այս ոգին ցուցուցած է ինքը. և Հռովմայի եպիսկոպոսին ու Կոստանդնուպոլսոյ եպիսկոպոսին մէջ եղած նախազատիւ ըլլալու ան բազմաժամանակեայ վիճարանութեան ատենը, և թէ Հայաստանու ան հեռաւոր զաւառին եպիսկոպոսը՝ ինչ և իցէ մէկ պատճառով մը ուզեր երթալ տեսնել զՀռովմ՝ աշխարհիս թագաւորութեան աթոռը, առաջուց կրնայինք դուշակել թէ՛ Հռովմայի եպիսկոպոսը պիտի չկորսնցընէր աս պատեհութիւնը՝ թախանձելու որ հարկաւոր է իրմէն կարգ առնել: Բայց՝

Երկրորդ՝ մենք աս բոլոր պատմութիւնը շինծու
կը սեպեմք, կարծիքներէ զատ առանց ամենեւին
ճշմարտութեան նշոյլ մը ունենալու :

Հոովմ՝ համբաւաւոր եղած է ինքզինքը բարձ-
րացընելու և մեծցընելու համար կեղծեալ պատ-
մութիւն շինելու կողմէն : Եւ աս Վրիգոր Լու-
սաւորչայ վերստին ձեռնադրութեան պատմու-
թիւնն ալ հաւանական է որ անոնցմէ մէկն է :

Մինչև անգամ ճշմարիտ ալ ըլլայ՝ ոչինչ է .
վասն զի Պապին իրական իշխանութիւնը ինչ
ըլլալուն և աշխարհիս վրայ մինչև ուր հասնելուն
վրայով բան մը չապացուցաներ . բայց պատմու-
թեանը ճշմարիտ ըլլալն ալ շատ կասկածելի է :

Վարձեալ կը հարցընեմք թէ ինչո՞ւ համար
Հայոց ազգը կամ անոր մէկ մասը՝ այնքան հե-
ռուն նային և Հոովմայի եպիսկոպոսը իրենց
հոգևոր գլուխ ճանչնան, և հոգևոր բաներու
մէջ անկէ հրաման ընդունին : Ի՞նչ աւելի
բան ունի Հոովմայի եպիսկոպոսը Հայոց ազգին
հետ, քան Եջմիածնայ Կաթողիկոսը Հոովմա-
յեցւոց ազգին հետ : Եթէ Հոովմայի և Խա-
լիայի ժողովուրդը կ'ուզեն որ Պապը իբրև եպիս-
կոպոս իշխէ վրանին, իրենք գիտեն . և թո՛ղ իշ-
խէ իր սեպհական թեմին մէջ, բայց Եսիական
եկեղեցիներէն խոնարհութիւն և հնազանդութիւն
պահանջելուն ինչ ըսեմք, եթէ ոչ՝ յայտնի յա-
փըշտակութիւն : Եւ ատ աղէկ պիտի ըլլար Հա-
յոց եկեղեցւոյն որ Հոովմէն իր անկախ ըլլալը ա-

աաջուան պէս պահէր : Բայց յաջորդ դարերուն՝ բաւական մտերմութիւն ունեցաւ անոր հետ , որով կարող եղաւ Հոովմ իր սխալմանցը և մոլորութեանցը շատերը Հայոց մէջ ալ թափելու : Բողոքովին յայտնի է որ Ղուսաւորչայ և անոր անմիջական յաջորդներուն ժամանակը Հայկական եկեղեցւոյ հաւատոյ վարդապետութիւնները և գործնական մասը՝ հիմնական եղածէն շատ տարբեր էր : Գոյափոխութիւնը՝ եօթը խորհուրդները՝ պատկերքներն ու սրբոց մասունքները պաշտելը՝ մեռելներուն համար պատարագուց տալը , և այլն և այլն , կ'երեւայ թէ անծանօթ էին : Եւ շատ յայտնի է որ բոլոր ասոնք և շատ ուրիշներ ալ Հոովմայէն սպրդեալ մտան :

Ըրդ՝ համառօտ խօսքով բանի մը գլխաւոր առարկութիւններ ներկայացընեմք Հոովմայի Պապին հետ բնաւ բան մը ունենալուն վրայով :

Վախ՝ Հոովմայի կրօնի բնութիւնը ազգութիւնը որմանալ յոտաջ իւր բէրէ : Ըշխարհիս մէջ ուր կ'երթայ աս կրօնքը՝ կրցածին չափ կը նայի Պապին հպատակեցընել մարդիկը , և ետ բռնել զանոնք ամեն ուրիշ հպատակութենէ և կապակցութենէ : Հայոց՝ իրենց նախնիքը և լեզուն մոռնալ կու տայ և երկուքն ալ ամօթ սեպել , կ'օտարացընէ զիրենք բուն իրենց ժողովուրդէն և իրենց սրտին մէջ անոնց վրայ կը տածէ անարգութիւն մը և արհամարհանք մը , որոնք “ոսկր յոսկերէ և մարմին ի մարմնոյ” են : Ըսիկայ միանգամայն թէ բնու-

Թեան և թէ քրիստոնէութեան դէմ է : Բնու-
թիւնը կը սորվեցընէ հայրերնիս ու մայրերնիս
սիրել և ազգերնիս պատուել : Վրիստոնէութիւնը
կը վաւերացընէ նոյն դասը , և ուր որ իր ոգին
մարդկային սրտին աղագծ է , ան անձը կ'ըլլայ
լաւագոյն քաղաքացի մը և աւելի յարմարութիւն
կը ստանայ ամեն ընկերական և քաղաքական պար-
տաւորութիւններուն : Աոր շարժառիթ մը կը զգայ
անիկայ իր ներսիդին իր ազգը սիրելու , և փափաք
ու ջանք մը՝ անոնց յաջողութեանը և երջանկու-
թեանը վերաբերեալ ամեն բաներուն մէջ , որն որ
առաջ բնաւ զգացած չունէր :

Անետիկի կրօնաւորները պիտի ցուցընեն իբրև
օրինակ մը՝ պապականութիւնը ազգատեցութեան
առաջնորդելուն վրայ ըսածնիս հերքելու համար :
Չէ՞ որ անոնք իրենց ազգին օգուտին համար կ'աշ-
խատին այսքան տարիէ 'ի վեր , և չէ՞ որ մանաւանդ՝
մեծ փութով իրենց նպատակ դրած են նորոգել և
վերստին կանգնել Հայոց գրականութիւնը . Այո՛ .
Աս մասին շատ աղնիւ գործ մը ըրած են . բազմա-
թիւ օգտակար գրեանք ազգին ընծայած են , և
ձեռք ձգած են գրութեան ոճ մը , որ իբրև օրինակ
ճանչցուելու արժան է : Բայց բուն իսկ անոնց նա-
խանձով իրենց մայրենի լեզուն մշակելուն , և ազ-
գային սիրոյ ու մերձաւորութեան նշաններ ցուցը-
նելուն համար է որ՝ աւելի հաստատուն հռովմէա-
կանները , իբրև հերետիկոս վատահամբաւեցին զի-
րենք , և մէկ սաստիկ բողոք մը եղաւ նոյն Խոտա-

լերէն Պարսաւագիրքին միջոցովը՝ որ բոլոր նախան-
ձաւոր Հռովմէականները իրենց զօրութիւնը միա-
ցրեն Սուրբ Ղազարու վանքը կործանելու :

Ընանկ որ Լքբացւոց աս հայրենասիրական
զգացումը աւելի կը հաստատէ մեր առջի ըսածը թէ՛
Հռովմի կրօնքը իրօք ազգատեցութեան կ'առաջ-
նորդէ մարդը :

Լքդէն ամենուն ծանօթ է որ Յունաց մէկ պղտիկ
մասն ալ Պապին դարձած է : Եւ Պապական ե-
կեղեցականները ամեն ջանք 'ի դործ դրին որ մոռ-
ցրենն անոնց իրենց արմատը և իրենց ազգը : Լ-
նոնց Պապական առաջնորդները սորվեցուցին որ
բոլորովին վերցրենն Յոյն անունը և ինքզինքնին
Լատին կոչեն : Եւ Յունարէն գիրերը բոլորովին
վերցուցելու են իրենց գիրքերէն . և թէպէտ Յու-
նարէն լեզուով գրուած են՝ ժողովուրդը ուրիշ լե-
զու չհասկընալուն համար, բայց Յունարենին տե-
ղը՝ Հռովմէական գիրերով տպուած են :

Երկրորդ՝ Պատերազան Բոլոր անցեալ պատմութիւնը
իւր-իւրն են թէ իրենք բնութեան տեսեալն զպատմութեան
նը Բոլորովին անարժան են : Լքդարեւ ողորմելի է ան
ահաւոր ակնածութիւնը և ան տղայական դիւրա-
հաւանութիւնը, որով Հայ Պապականներէն ոմանք
կը խօսին Պապին վրայ, “Սուրբ Պետրոսի Լքու”
ըսելով, որպէս թէ այնքան ստուգութեամբ դիտ-
ցուած է Հռովմայի եպիսկոպոսին անոր յաջորդը
ըլլալը, որքան որ Սուրբան Լպտիւլ Սէճիտին՝ Սեճն
Սուրբան Սահմուտի յաջորդ ըլլալը գիտեմք . և

փաստի կարօտ չէ ամենուն պայծառ ցուցընելու
 համար թէ՛ երկրիս երեսին վրայ եղած ամեն ճրջ-
 մարիտ քրիստոնեայ պարտական է հպատակիլ ու
 հնազանդիլ Պապին :

Ես նիւթին վրայ քանի մը պարզ իրողութիւն
 կան , որ բոլոր աշխարհ գիտնալու է . և անոնց
 վրայ անշուշտ շատ պիտի ապշին : Օրր օրինակ
 Պետրոս առաքեալին Հռովմ այցելութիւն ընելը
 'Նոր Ատակարանին մէջ յիշուած չըլլալը , և ո՛չ որ
 և իցէ հեղինակի պատմութեանը մէջ , մինչև աս
 գործքին եղաւ ըսուած ատենէն Լուսինի յիստ-ն տա-
 րի վերջը : Արանոս է աս բանին վրայ առաջին խօ-
 սողը , և աւանդութեան մը պէս կը պատմէ : Աչ
 Ղուկաս ոչ Պօղոս և ո՛չ Յովհաննէս Աւետարա-
 նիչ որ ժամանակակից էին անոր , ոչ Պետրոս ա-
 ռաքեալ ինքը՝ ո՛չ ալ առաքելոց ատենի հայրա-
 պետները՝ որ են Աղեմէս , Քառնարաս , Հերմաս ,
 Իգնատիոս և Պողիկարպոս , որոնք շատ անգամ կը
 խօսին Պետրոս առաքեալին վրայ , ասոնցմէ և ոչ
 մէկը՝ մէկ ակնարկութիւն մը 'կ'ընէ՝ անոր երբէք
 Հռովմ երթալուն վրայ :

Ես բանը Արանոսէն ետքը պատմողներուն մէջ
 ալ համաձայնութիւն չկայ երբ երթալուն և հոն
 որքան ատեն եպիսկոպոսութիւն ընելուն վրայ : Մէկ
 քանին կ'ըսեն թէ Աղողիոս կայսրին ատենը գնաց
 Պետրոս առաքեալ Հռովմ . բայց բոլորովին ան-
 միարան են տարիին կողմանէ . մէկը անոր իշխա-
 նութեանը երկրորդ տարիին կը գնէ . միւսը երրոր-

դին կամ չորրորդին . ուրիշներն ալ մինչև երեսուներորդ տարիին կը հանեն :

Ուրիշներ ալ կան՝ որ կը ծանուցանեն թէ Պետրոս առաքեալը Ներոն Վայսրին ատենը հասաւ Հռովմ . քայց ասոնք ալ տարիին վրայ կը տարբերին :

Իսկ անոր եպիսկոպոսութեան որքան տևելուն միջոցին վրայ , մէկը քսան իրեք տարի կ'ըսէ , մէկը քսանհինգ , մէկը քսան և եօթը և ուրիշ մը քսանևինը :

Ինչպէս կրնամք մեկնել այս անհամաձայնութիւնը , եթէ ոչ բոլոր պատմութիւնը անհաստատ աւանդութեան վրայ հիմնուած , և ոչ թէ պատմավկայութիւն մը սեպելով : Այլ եթէ ասկէ հաստատ կանվկայութիւն չունի , անշուշտ չկրնար անանկ հիմն ըլլալ , որուն վրայ հաստատուի այնքան վճռական բացարձակ՝ ընդարձակ՝ և աննահանջելի իրաւունք մը բոլոր աշխարհի ամբողջ կառավարութեանը , ինչպէս որ Հռովմայի եպիսկոպոսը կը պահանջէ :

Իարձեալ իրողութիւն մըն է որ Արանոս , Աուրինոս , Ալեսեքիոս և “Վաքեւիլական սահմանադրութիւնք” կոչուած գրքին հեղինակը՝ ամենը կը պատմեն թէ Վիննոս՝ առաջին Հռովմայեցի եպիսկոպոսն էր . որոնք նաև կը ցուցնեն թէ Վիննոս , Աղեգոս և Աղեմէսրոր աս պաշտօնին մէջ մէկզմէկ յաջորդեցին , ամենը Պետրոս առաքեալին կենդանութեանը ատենը Հռովմայի եպիսկոպոսներ եղած են : Հետևապէս Պետրոս առաքեալը բնաւ Հռովմայի եպիսկոպոս եղած չէր կրնար ըլլալ . եթէ ոչ՝ միև-

նոյն ժամանակը երկու Հռովմայի եպիսկոպոս մէկ-
 անը եղած կ'ըլար: Ուստի կը հետևի որ Պապերուն
 իբրև Հռովմայի եպիսկոպոս՝ Պետրոս առաքեալէն
 յաջորդութիւնը բոլորը առասպել մըն է, և Պետ-
 րոսի (ինչպէս որ իրենք կ'ըսեն) առաքելոց գլուխ
 ըլլալէն՝ Պապին եկեղեցւոյ գլուխ ըլլալը բոլորովին
 կը հերքուի :

Նաև դարձեալ աս ալ իրողութիւն մըն է որ կա-
 տարելապէս անհամաձայնութիւն կայ Հռովմայի
 եպիսկոպոսութեան մէջ Պետրոս առաքեալին ան-
 միջական յաջորդները ո՛վ ըլլալուն վրայ : Յիշե-
 ցինք արդէն որ հայրապետներէն ոմանք Ղիննոս կը
 դնեն Հռովմայի առաջին եպիսկոպոսը: Ուրիշները
 Վլեմէս կը դնեն Պետրոսի յաջորդ . և ուրիշներն
 ալ կ'ըսեն թէ չեմք կրնար որոշել թէ ո՞վ է աս
 պատիւին տէրը : Վերջին աստիճան շփոթութիւն
 կայ նաև Պետրոս առաքեալէն վերջը Հռովմայի
 չորս առաջին եպիսկոպոսներուն յաջորդութեան
 կարգին վրայ . Պեդաւիոս , Պրուի , Վոսար , ու-
 բոնց բոլորն ալ Հռովմէական հեղինակներ են՝ կը
 խոստովանին թէ եկեղեցւոյ ան հին դարերուն մէջ
 անկարելի է Պապական յաջորդութեան վրայօք
 ճշմարտութեան կամ ստուգութեան նշոյլ մը գրտ-
 նելը: Ուրեմն ի՞նչ եղաւ ան յաջորդութեան շղթան
 որ կը կապէ ներկայ Պապը Պետրոս առաքեալին
 հետ . ի՞նչ արժէք ունի ան շղթան երբ անոր քանի
 քանի օղերը պահաս են :

Դարձեալ Հռովմէական հեղինակները իրենք

վկայած են աս իրողութիւնն ալ որ քսան և վեցէն մինչև երեսուն հերձուած եղած է պապականութեան մէջ՝ որոնք երբեմն Պապ ընտրելու մէջ եղած սաստիկ անմիաբանութենէ, և երբեմն ալ վարդապետութեանց տարբերութենէ ծագած են : Քանի քանի անգամ պատահած է որ մի և նոյն ատենը երկու հակառակաթոռ Պապ մէկէն նստած են . և անգամ մըն ալ երեքը մէկէն . և ճշմարիտ Պապը որը ըլլալը՝ մէկը չկրնար ցուցընել :

Չորրորդ դարուն մէջերը Լիբերիոս Հռովմայի եպիսկոպոսը Կոստանդին կայսրէն Ռերիա քշուեցաւ Լըրիոսականութեան դէմ ըլլալուն համար, որ անատենը Հռովմայի եկեղեցւոյն մէջ շատ տարածուած էր . և Փելիքս անունով Լըրիոսական մը Պապ ընտրուեցաւ և օժուեցաւ անոր տեղը : Լիբերիոս վերջապէս ստորագրեց Լըրիոսական դաւանութիւնը և դարձաւ իր Պապութեանը . Փելիքս ալ վար չիջնելով, եկեղեցւոյ մէկ մասէն իբրև Պապ ընդունուեցաւ : Ըս երկու մարդիկն ալ սրբոց թիւը դասուած են Պապական եկեղեցւոյ մէջ, և իբրև միջնորդք Լստուծոյ՝ աղօթք կը մատուցուին անոնց, թէև երկուքն ալ ուրացած են Քրիստոսի Լստուածութիւնը :

Սիլվերիոս Պապ եղաւ 536 թուականին Սիմոնականութեամբ . և քիչ ասենէն Սիլիկիոս գլորցուց անիկայ պաշտօնէն, ինք ձեռք ձգելով նոյն օրինակ միջոցներով, և Թէոդորա թագուհւոյն օգնութեամբ : Հռովմէական օրինաց կանոնին նայե-

բով՝ աս երկուքն ալ օրինաւոր Պապ չէին, ան պաշտօնը սիմօնականութեամբ ձեռք ձգելովն. և անտարակոյս Վիկելիոսին ընտրութիւնը և ձեռնադրութիւնը անվաւեր էր, վասն զի նախորդ Պապը կենդանի էր իր պաշտօնի դրուած ատենը: Բայց և այնպէս անօնք երկուքն ալ Պապերուն յաջորդութեան շղթային մէջն են:

Պապականութեան մէջ եղած ուրիշ բազմաթիւ նոյն օրինակ հերձուածները թողելով, համառօտիւ յիշեմք արեւմտեան մեծ հերձուածը, որով եկեղեցին կէս դար տակն ու վրայ և խայտառակ եղած էր: Պապին աթոռը Վաղղիսյի մէջ Եւֆինիոն քաղաքը կ'ըլլար և ոչ Հռոմ: Արքեպիսկոպոս Ժ.Մ. վերադարձուց անիկայ Հռոմ. և անոր մահուանը ատենը երկու Պապ ընտրուեցաւ Ուրբանոս և Աղեմէս. վերջինը իր աթոռը Եւֆինիոն, և առաջինը Հռոմ հաստատելով: Առ անատենը եկեղեցին չէր կրնար որոշել թէ որն է իր սեպհական գլուխը, որովհետեւ երկուքն ալ նոյն ընտրող կարտինալներուն ժողովքէն ընտրուած էին. առաջինը ընտրուեցաւ Հռոմ՝ Երեսուն հազար ռամիկներուն ցուցուցած երկիւղովը. և երկրորդը Փունտի, ան տեղն որ՝ առաջին ընտրութենէն վերջը, ընտրողները ազատութեան և ապահովութեան համար քաշուեցան: Սկովտիա, Վաղղիա, Սպանիա, Վաիոլի և ուրիշ քանի մը երկիրներ՝ Աղեմէսը կ'ընդունէին. երբ Ենգղիա, Վերմանիա, Բորթուկալ, Իտալիա, Հունկարիա, և այլն և այլն, հպատակեցան Ուրբա-

նօսին : Քանի մը երկիրներ ալ չէղօք մնացին : Ըս հերձուածը Եւրոպայի ամէն կողմը սփռեց երկպառակուածիւն՝ ատելութիւն՝ բարոյականի խանգարում՝ և պատերազմ : Պապ Պապի դէմ անաթեմաներ և բանադրանքներ կը կարգար . կարտինալներ տանջանքի և մահուան կը մատնուէին : Եւ վերջապէս պատերազմը մէկմէկու հակառակ երկու Պապերուն ձեռօքը գրգռուելով, շատ թագաւորութիւններ կործանեց, և մանաւանդ Վաղղիա և Խաւիս : Ըս բաները այսպէս յիսուն տարուան չափ շարունակեցին աս մարդոցը և իրենց յաջորդացը նախանձութեանը և շարութեանը պատճառաւ : Ա երջը ընդհանուր Էռովմէական ժողով մը կազմուելով Խաւիսայի մէջ Վիզա քաղաքը, (1409 թուականին) ան ալ չկրցաւ ստուգել թէ երկուքէն ո՞րն է օրինաւոր Պապը . վասն որոյ երկուքն ալ վար առնելով անօնց տեղը Էղեքսանդրը Պապ ընտրեց : Բայց վար առնուածները չուրեցին հնազանդիչ այս ժողովոյն և ամեն մէկը իր տեղը կը շարունակէին տիրել, անանկ որ երկուքին տեղը հիմա եկեղեցւոյ անսխալ քրեք գլուխներ եղան, որոնց ամեն մէկը կ'անիծէին և կը բանադրէին միւսները : Ենատենը ուրիշ ընդհանուր ժողով մըն ալ կազմուեցաւ Քոստանցայ (1414 թուականին) և իրեք Պապերը՝ ամենն ալ երգմամբ խոստացան թէ պիտի հնազանդին անոր վճռոյն, բայց իրեքն ալ երգումնին կոտրեցին՝ և այսպէս անատենը եկեղեցին ունեցաւ իրեք երգմեալանց գլուխ, և Քրիստոս ալ՝

իրէք երդմնազանց փոխանորդ : Եւ Պապերը ան-
սխալ ըսուած ժողովի մը վճիռովը հերձուածողու-
թեան՝ հերետիկոսութեան՝ սիմոնիականութեան՝ ամ-
բարչտութեան՝ պոռնկութեան՝ շնութեան՝ անհա-
ւատարմութեան՝ սողոմականութեան՝ կուսապղծու-
թեան՝ յափշտակութեան՝ մարդասպանութեան՝
երդմնազանցութեան և անհաւատութեան յան-
ցանքը ունէին : (տես Լապէ , Երարք ժողովոց •
Ժդ հատ • 122 , 175 երես : Բօսար , Պատմութիւն
ժողովոց • դ հատ • 90 , 110 երես • և Տիւրէն դ
հատ • 15 , 19 երես • որոնց ամենն ալ Հռովմէական
հեղինակներ են :)

Երդ՝ ո՞ւր էր Պապական յաջորդութիւնը աս
հերձուածողութեան ատենը : Բոլոր Յիսուսեանց
իմաստակութիւնները օգուտ մը չեն կրնար ընել աս
խնդրոյն պատասխանելու : Եւ բազմաթիւ Հռով-
մէական հեղինակներ խոստովանած են թէ անպա-
տասխանի է • որոնց ոմանք իրենց ամենէն երևելի
գիտնականներէն են՝ ինչպէս Կերսօն , Լնտօնինոս ,
Պելարմին , Լնտիլի , Մայէմպուրկ , Դանիէլ , Մօ-
րերէ , և այլն և այլն :

Իրողութիւն մըն ալ աս է որ քանի մը դար
Հռովմայի Պապերը անանկ վարքի և բնութեան
տէր անձինք էին որ ամօթ և նախատինք եղած էին
մարդոց՝ և բոլորովին զգուելի ու գարշելի Եստու-
ծոյ : Եւ նիւթին վրայ՝ մինչև հիմա ըրածնուս պէս ,
բուն Հռովմէականներուն վկայութեանը պիտի նա-
յիմք • Ղենեպրանտ այսպէս կ'ըսէ "Per annos fere

150 Pontifices circiter quinquaginta a Joanne scilicet VIII usque ad Leonem IX virtute majorum prorsus defecerint apostatici quam apostolici (Geneb. IV.) Այսինքն՝ «150 տարուան մէջ յիսուն Պապ չնովհաննէս ըն մինչև Լեոն Թ. բողոքովին զուրկ էին իրենց նախորդացը սրբութենէն, և յաւէտ ուրացող էին քան թէ առաքեալ»:

Պարոնիոս կ'ըսէ թէ «Տասներորդ դարուն մէջ շատ մը սոսկալի հրէշներ ինքզինքնին Պապական գահը անցուցին, որոնք էին յափշտակող՝ մարդասպան՝ սիմոնիական՝ սրիկայ՝ բռնաւոր՝ սրբապիղծ՝ երդմնազանց և ամեն տեսակ չարութեանց տէր: «On ne voyoit pas alors des papes mais des monstres», կ'ըսէ Նիաննոն (Է. 5.) այսինքն «Այլ Պապ չկար այլ հրէշներ»: Աւ դարձեալ նոյն տեղը կ'ըսէ: «Le siege de Rome etoit donné au plus offerant»: Ար կը նշանակէ թէ «Վ՛ի որ շատ տար՝ Հռովմայի աթոռը անոր կը տրուէր»:

Ատեն մըն ալ Պապերը կ'ընտրուէին ոչ եկեղեցականներէն և ոչ ժողովուրդէն, այլ Թեոդորա և Վարողիա անունով երկու վատթար պոռնիկներէ, որոնք մայր ու աղջիկ էին. սսոնք բաւական իշխանութիւն ունէին իրենց սիրածներէն ուղածնին աթոռը դնելու: «L'infame Theodora fit elire pour pape le plus déclaré de ses amants qui fut appelé Jean X. Baronius écrit qu' alors, Rome etoit sans Pape» (An. Eccl. 345. Giannone VII. 5.) Այսինքն «Եսայտառակ Թեոդորան իր սիրածներուն ամենէն

յայտնին Պապ ընտրել տուաւ, որ Յովհաննէս Դ կոչուեցաւ: Պարոնիս կը դրէ թէ անատենը Հռովմաւանց Պապի էր: Յովհաննէս Դ Ֆ աւելի անարգ մէկն էր: Լ. սիկայ Յովհաննէս անուն սարկաւազ մը մեռցուց ամորձատութեամբ, և Ռենեգիկտոսն ալ՝ աչքերը հանելով, մէկ կարտինալի մը քիթը՝ ուրիշէ մըն ալ ձեռքը կտրեց. յայտնի շնացող մըն էր Հռովմայի աղնուուհեացը հետ, և կանանց ողջախոհութիւնը՝ Պետրոս առաքեալին յաջորդը ըսուածէն աւրուելու երկիւղը, կ'արգիլէր զանոնք անոր պալատին մօտը երթալէն: (Ղապէ. Լ. բարբ Ժող. Թ հատ. 881 և 887 երես: Տլաթինա. 152 երես. Պելարմին. Թ հատ. 20 երես:)

Սոնիփակիոս Լ. իր նախորդը սպաննեց և յափըշտակեց Պապական աթոռը 974 թուականին: Լ. սիկայ մարդիկներուն մէջ ամենաանարգ և ամենաչարն էր: Հռովմայի քաղաքացիքը վար առին անիկայ իր անգթութեանը համար, և անոր տեղը ընտրեցին Ռենեգիկտոս Լ. ը: Ռայց անիկայ ստակով յաջողեցաւ ինքզինքը դարձեալ աթոռը հանելու և սպաննեց Յովհաննէս Դ. Ի. ը, որ իր հօն չեղած ատենը աթոռը ելեր էր: Երբ որ մեռաւ՝ մարմինը փառատեցին և յետին անարգութեամբ Հռովմայի փողոցներէն քաշկռտեցին իր կուսակիցները, որոնց բոլորովին ատելի եղած էր: (Սպոնդանոս. 974 և 985 երես. Պրուի. Թ հատ. 265, 271. և Ս ինիլեէ. Թ հատ 608:)

Ըն ատեններուն Պապերուն անկարգութեանը վերայօք եղած առ իրողութիւնները՝ Հռովմէական

հեղինակաց պատմածներուն մէկ շատ պղտիկ մասն է : Բայց բաւական է ցուցնելու աս մարդոցը պահանջած առաքելական յաջորդութեանը վերջին աստիճանի ոչնչութիւնը : Ի՞նչ արժէք ունի այսքան փտտած օղերով շղթան : Եւ ի՞նչ յարգութիւն կրնայ ունենալ անանկ պաշտօն մը՝ որ երկրի վրայ ամենէն բարձր և բուն Եստուծոյ սահմանուած ըլլալ կը ձևացնէ, և ասանկ ապականեալ ձեռքերէ անցած է :

Բայց թէ որ ըսեն թէ, հիմակուան Պապը աղէկ մարդ է և նախորդներէն շատ տարբեր, ըսենք թէ աղէկ մարդ է, ատկէ կը հետևի՞ որ Հայերը պարտաւոր են զանիկայ իբրև Քրիստոսի փոխանորդ և ընդհանուր եկեղեցւոյ գլուխ ընդունելու : Ի՞նչ նախորդներէն ոմանք՝ յաջորդութեան կարգին մէջ, ինչպէս որ տեսնուեցաւ մարդկային ազգին ամենավատթայներէն են, և եթէ երբէք իրաւունք մը ունի առաքելական իշխանութեան, հարկաւ աս անդգամներուն ձեռքը հասած պիտի ըլլայ իրեն, և խելքը գլուխը մէկը կրնայ հաւատալ որ Եստուծոյ շնորհքը իրօք աս պիղծ ձեռքերէն անցաւ և եկաւ հանդէսեցաւ ներկայ Պապին վրայ : *

* Եւ քեզ երկայրութեան լիւն իւր հայ Պապականութեան դէմ : Եւնի բանական մտք պիտի զիտայ որ ինչ մտայ ու գոգոտայրութեան քանի եղողը օրոյ մտքը չկրնայ ներել, (եւեւ երբէք աս իշխանութեան օգտութիւն իւր կրնայ ունենալ :) Ասանորոյ աս շարք

Բայց Պիոս Թ. Պապը արգելօք ցուցուցած է թէ արժանի է վստահութեան, իբրև Վրիստոսի փոխանորդ երկրի վրայ : Ըստ տետրալին հեղինակը դացած է անոր տէրութեան երկիրները : Ընդհանրապես հոն երկրաւոր թագաւորութիւն մը իր հարկաւոր մասերովը, զօրք՝ նաւատորմիդ՝ հրացաններ՝

շնացող անիկիսը երբեք Պապ սեղեւը չէ, եւ ան Պապոսիան հեղինակներուն ըսածին պէս անասունը Պապ չկար ըսելու է : Բայց ելեւ ապացոյցն մեկտը չորմէն փոխչելու համար, իւրիւն լեւ անոնք օրինաւոր Պապ էին եւ լեղիւր իրենք դատարարութեալ, Բայց եւ այնպէս ներսը լեւան իշխանո-լեւն) ունէին, անասունը՝ Սուրբ Գրոց պէ՛մ յայտնի ապարտաբո-լեւն ըրած պիտի ըլլան : Պօղոս տառաւոր Վրիստոսի համար խօսելով ի՛րեն, “Մեզի ճիշդ ասանկ քահանայապետ մը կը վայելէր, սուրբ՝ անմեղ՝ անարատ՝ մեղաւորներէն զատուած” : (Եբր. Է. 26) : Իսկ վերոյիշեալ շարեւր Պապ էին ըսողը՝ տառաւորն պէ՛մ այսպէս խօսած պիտի ըլլայ, “Ձեզն ճիշդ անանի շահանայապետ մը կը զայնէ եղէր, Բայց մեզն ալ ճիշդ ասանի շահանայապետ մը, շար՝ անիբոս՝ արեւմտահեղ՝ պոսնիկներէն չպարտած” : Ասան որոյ յայտնապէս բանտանո-լեւնը եւ Սուրբ Գիլիսը կը պարտաւորէ մեզ որ ըսէ՛ք լեւ անոնք Վրիստոսի պէ՛ղը շահանայապետ չէին երկրէ զրոյ : Երբոր ասանի ըսեն, ասիկ ալ կը հեղինէ որ կրնայ ըլլալ որ մեկը Պապոսիան ակաւոր նստի, նոյն լեւգը պնէ, նոյն իշխանո-լեւնը ունէնայ հարգոց մեղ, եւ պոսնո-լեւն օրինաւոր Պապ չըլլայ : Չասն որոյ հիմախաւն Պապին

գնտանկեր և այլն : Այս Գապերուն ամենէն աղէկը՝
ինչպէս որ ենթադրուեցաւ , իր հոգևոր զաւկրներուն
արիւնը թաթխած է ձեռքերը : Անոնցմէ քանի հա-
րիւրներ ու հազարներ սպաննուեցան 1849 ին իր
հրամանաւը , միայն անոր համար որ ըսին թէ բուն
իրենցմէ ընտրուած և հոգևոր կառավարութենէ
անկախ քաղաքական կարավարութիւն մը կ'ուզէմք .
և նոյն ասեմը բոլորովին պատրաստ էին ընդունիլ
իր հոգևոր իշխանութիւնը :

Ոչ ալ տակաւին իր ժողովրդեանը արեանը ու-
նեցած ծարաւը յագեցաւ : 1852 տարուան միայն
նոյեմբեր ամսուն մէջ աս խեղճերէն քսան ու չորս
հարիւր որ տարիներով բանտարգուած էին՝ Պիոս
Թին հրամանաւը հանեցին , և Սենեկալիա քաղա-
քը զարկին սպաննեցին : Արդարև աս գործին մէջ
Քրիստոսի նմանութիւն չկայ : Անչպէս կ'ըլլայ որ
Խալիլայի մէջ 15,000 Գաղղիացի զինուորներէն՝ ի

օրինաւոր , եւ ներողութեանը զաւերական բազում
ժամակներու չէնք . ժամն զի Աստուծոյ առջեւ ինչպէս
բազումն զհայտնիւնն մը չունի մեզնից ցոյցնելու . սիր-
տը ինչ բազումն է նաև Գաղղիան զարեւի որք բազում
չէնք գիտելը : Այս բանականութեան ու Սուրբ Գրոց
օրէն ընդունելու եւ , ինչ ասն չարելը օրինաւոր Պատր
էին . իսկ ինչ ասանց Պատրն օրինաւոր եւ իր ներողու-
թեանը զաւերական բազումն զստահար գիտնալու ,
հարց իր հոգւոյն յաւիտեանիան օգտաբար՝ Ժամանակն
աւերաբար հարողն յետքը յանձնելու եւ ինքօրէն :

զատ մօտերս խնդիր կ'ընէ Եւստրիայէն 15,000 ալ
 խրկելու իրեն , իր ծախքովը : Ալ ինչպէս կ'ըլլայ
 որ միշտ օտար տէրութիւններէ վարձկով զօրք կը
 պահէ իր կառավարութեանը պաշտպանութեանը
 համար , որ բան մը պատահած ատենը պատրաստ
 ըլլայ պատերազմելու իր ժողովրդեանը հետ : Ան-
 կողմնասէր միտքը պիտի խորհի որ եթէ իրօք Քը-
 ռիստոսի տեղն է ինք երկրի վրայ , իր թագաւո-
 րութիւնը Վրիստոսի թագաւորութեանը սկզբ-
 բանցը վրայ հիմնեալ պիտի ըլլայ : Բայց Վրիս-
 տոս չըսա՞ւ թէ , “ Դ՛մ թագաւորութիւնս աս աշխար-
 հէս չէ : Ա՛թէ իմ թագաւորութիւնս աս աշխար-
 հէս ըլլար , իմ ծառաներս կը կռուէին , որ ես չը-
 րէից ձեռքը չմատնուիմ ” (Հովհ . ԺԵ . 36 :)

Ո՞րչափ պայծառ կերպով յայտնի է որ Պիոս
 թիւն ասանկ պատերազմող ծառաներուն բազմու-
 թիւնովը վարած այս թագաւորութիւնը Վրիստո-
 սէն չէ , այլ բոլորովին աս աշխարհէս : *

* Ըստ Կիւրտի որ Տիւրքի Պատրիարքաները պատրաստն
 են ցուցնելու ինչ Վրիստոս Պիոսն աստուծոյ
 մասնակցութեամբ զայն գրեթէ արտաւերջ , ոչ Տիւրքի ինչ Պիոսն
 աստուծոյ շնորհով գնաց , եւ ան պէտք է Երկրայայտարար
 Էրզրում Պատրիարքան , այլ Երզրում ինչ Վրիստոս ան ժող-
 փութեան շնորհակցով իրարմէն զայն աստուծոյ եւ Կիւրտի Պիոսն
 աստուծոյ արտաւերջ , եւ հիմնականօրէն Պատրիարքան անոր ցու-
 ընդարար ըրեցողով անոր լեզուաւորութեամբն որ ժողովանդ
 է . այնչափ որ իրեն Լուսաւորացեալ ժողովուրդը իր ընդ-
 րէն Երզրում իր հարմարութեամբ իշխանութեամբ իր արդիւնն :

Ս կրջապէս Հ ուովմէական կրօնքը էականապէս մարդու հնարած կրօնք է :

Պապին գլխաւորութեան պահանջումը՝ ինչպէս որ տեսնուեցաւ բոլորովին մարդկային հնարք է : Հը ուովմայի յատուկ եղած վարդապետութիւնները և դորձքերը լոկ մարդկային վարդապետութեան վրայ հիմնուած են . և Մատուծոյ Խօսքէն վկայութիւն չունին : Մատուածաշունչը ո՞ւր տեղ կը սորվեցընէ թէ՛ մարդիկ կը փրկուին պատարագով և ապաշխարանք քաշելով . և քահանան իշխանութիւն ունի ստակով մեղք ներելու . թէ սուրբերը միջնորդ ընելու է , և քաւարան կայ մեռնելէն վերջը՝ ուր որ հաւատացեալները կ'երթան իրենց մեղքերը քաւարանին կրակովը մաքրելու . և թէ այսչափ անգամ Հ սյր մեր , և Աղջոյն քեզ Մարիամ և այլն զրուցուի արձանի մը առջևը , ներողութիւն կը ստացուի . և այլն և այլն և այլն :

Աջ ասոնց և ոչ ալ ասոնց նման հարիւրաւոր բաներու վրայով գիր մը անգամ կը գտնուին Սուրբ Գրոց մէջ , այլ շատ բան կայ որ ասոնց բոլորովին հակառակ է :

Եսկէ 'ի զատ Պապը բոլոր աշխարհ կը պարտի իր քարոզիչներուն ձեռօքը , ամեն տեղ Ի՛ն Բ , Օ՛Ւ՛ն ԲԸ , քարոզելով : Եմեն տեղ ամեն մարդոց կը կանչէ իշխանութեան ձայնով՝ որ Օ՛Ւ՛ն ԲԸ ընդունին և կատարեալ հնազանդութիւն մտաուցանեն Ի՛ն Բ՛ն : Իրօք սա եղած է իրենց ուղղափառութեան փորձը և նշանը ոչ թէ Վրիժապոս և ան ալ խաչք

Էլած է որ կը քարոզուի , այլ ՀՈՒՈՎՄԵՅԻ ՊԵՊԸ : Բրիտանի Տաւատացողը չէ որ պիտի փրկուի , այլ Պատկն Տաւատացողը : Ո՛րքան տարբեր է ասիկայ Եւետարանէն . համառօտ ըսելով՝ բոլորովին մարդօցմէ շինծու բան մըն է :

Եւ Հայոց ազգը ասանկ մարդու մը իշխանութիւնը իր վրայ առնելու պիտի փափաքի՞ : Թէ որ ասանկ բան մը ուզող մարդ կայ կ'ուզեմ հարցընել իրեն թէ՛ ձեր իրեն ըրած պատիւին ինչ փոխարէն կրնայ ընել : Մէկ իրական հողեւոր շնորհք մը չունի տալու , որն որ դուք առանց անոր՝ աւելի դիւրաւ անմիջապէս Եստուծմէ աղօթքով և անոր Սուրբ Խօսքը կարդալով չկրնաք ընդունիլ : Սարմնաւոր պաշտպանութիւն ալ չկրնալ ընել ձեզի , որովհետեւ այնքան տկար է որ մինչև անգամ ինքզինքը չկրնար պաշտպանել առանց օտար զօրքերու : Չեզի բնաւ օգուտ մը չկրնալ ընելէն զատ՝ ձեր մարմնաւոր նեղութիւնները կ'աւելցընէ , և հողեւորապէս Եւետարանին յայտնի և պարզ ճըշմարտութենէն կը մոլորեցընէ ձեզ :

Ար վախնա՞ք անոր բանադրանքէն . շատերը բանադրուեցան անկէ և ողջ մնացին , բան մը չեղան . երկրաւոր նեղութիւններ ալ վրանին չեկաւ , և հողեւոր խաղաղութիւն և ուրախութիւն ալ առաջուրնէ աւելի շատ ունին :

Եմբողջ թագաւորութիւններ անոր անէծքին տակը ինկան , բայց և այնպէս վրանին անէծքին մէկ նշանն ալ չտեսնուիր . այլ անոր հակառակը ,

Երկրի վրայ ո՞ր երկիրները Ընդդիպէն ու Ըմբռի-
գայէն աւելի զօրաւոր՝ յաջող՝ ու երջանիկ են ա-
մեն կերպով. և ո՞ր երկիրները անոնցմէ աւելի վա-
յելեցին Հռովմայի եպիսկոպոսին բանադրանքները:
Վասն որոյ անոր անէծքներէն երկրաւոր դժբաղ-
դութեանց վախ ալ ունենալու չէ:

Իսկ հանդերձեալ աշխարհին կողմանէ՝ դատաս-
տանին օրը փնտուելու բանը աս պիտի չըլլայ, թէ
Հռովմայի եպիսկոպոսը ընդունե՞ր ես և անոր հնա-
զանդե՞ր ես, այլ աս պիտի ըլլայ թէ ճշմարտա-
պէս և սրտանց ընդունե՞ր ես Տէր Յիսուս Քրիս-
տոսը և անոր պատուիրանքներուն հնազանդե՞ր ես:

Ըն ահաւոր ատեանին առջևը Հռովմայի եպիս-
կոպոսն ալ քեզի պէս՝ տկար, անօգնական պի-
տի կայնի, քեզի ո՛չ փաստելու և ոչ օգնելու կա-
րող: Եւ եթէ դուն Քրիստոսի ճշմարիտ սէրը ու-
նիս քու սրտիդ մէջը, ընդհանուր տիեզերաց մէջ
մէկ էակ մըն ալ կարող պիտի չըլլայ երբէք քեզ
անկէ բաժնելու:



3928

